

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ  
(ԱՐԴՅՈՒՆՔԱՀԵՆ ՁԵՎԱԶՍՓՈՎ)**



---

Հաստատված է Արթիկ համայնքի ավագանու  
2016 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 79-Ա որոշմամբ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

## 1. ԻՆՉ Է ԱՐԴՅՈՒՆՔԱՆԵՆ ԲՅՈՒՋԵՆ

Համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր է, որը նպատակաուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Համայնքի 2016թ. բյուջեն կազմվել է բյուջետավարման արդյունքահեն ձևաչափով: Արդյունքահետ բյուջետավարումը բյուջեի պլանավորման, կատարման և դրա նկատմամբ վերահսկողության մեթոդաբանություն է, որով ապահովվում է համայնքային քաղաքականությամբ սահմանված առաջնահերթությունների հիման վրա մշակված ծրագրերից սպասվող արդյունքների և հանրային ծախսերի (օգտագործվող բյուջետային միջոցների) վերաբաշխման գործընթացի միջև փոխադարձ կապը:

Արդյունքահետ բյուջեով սահմանվում են բնակչությանը համայնքային ծառայությունների արդյունավետ մատուցման և համայնքային նշանակության խնդիրների լուծման համար նախատեսված ծրագրերը և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումները, նաև հատուկ ամրագրվում են ծրագրերի ակնկալվող վերջնական արդյունքները և այդ արդյունքների չափելիությունը՝ քանակական և որակական չափորոշիչներով: Վերջինս հնարավորություն է տալիս առավելագույնս ստուգելի դարձնել վերջնական արդյունքը և բարձրացնել ծախսերի կատարման արդյունավետությունը:

Արդյունքահետ բյուջետավարման միջոցով միաժամանակ արմատավորվում է նոր որակի և մակարդակի կառավարում:

Արդյունքահեն բյուջետավարման գործընթացը հնարավորություն է տալիս համայնքի զարգացման քառամյա ծրագրի (ՀԶԲԾ) հիման վրա պլանավորել համայնքի առկա ֆինանսական միջոցները, դրանք օգտագործել խնայողաբար, արդյունավետ և հրապարակային:

Կարևորելով մասնակցային գործընթացները տեղական ինքնակառավարման համակարգում՝ բյուջետավարման արդյունքահեն ձևաչափով լավագույնս ապահովվում է բյուջետային ծրագրի միջոցառումների ու գործողությունների կատարման թափանցիկություն, վերահսկումը և հաշվետվողականությունը:

Այսպիսով՝ բյուջետավարումը դադարում է դիտարկվել միայն որպես ֆինանսական պլանի կատարում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԹԻԿԻ ՄԱՍԻՆ

**Արթիկը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2-րդ քաղաքն է, վարդագույն տուֆի հայրենիքը:**

Արթիկն ամբողջությամբ կառուցված է վարդագույն տուֆից: Նախկին Խորհրդային կայսրության տուֆի ամենահարուստ հանքաշերտերը Արթիկում էին: Այժմ էլ վարդագույն հանքերը քաղաքի հպարտությունն են: Արթիկի տարածքները հարուստ են նաև այլ օգտակար հանածոներով՝ պեմզա, պերլիտ, հրաբխային խարամ, կավեր և այլն:

Արթիկը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմուտքում, Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին: Քաղաքը գտնվում է լեռնատափաստանային բնական գոտում և շրջապատված է չքնաղ լեռնային բնապատկերով: Համայնքի միջով հոսում են Մանթաշ գետի Գոմշաձոր և Մովրովի վտակները: Քաղաքը հարուստ է ժայռերից և գետնի տակից բխող աղբյուրներով: Արթիկցիները հավատում են աղբյուրների բուժիչ ազդեցությանը և խնամում են դրանք, կառուցում աղբյուրները զարդարող խաչքարեր:

Քաղաքը գտնվում է մարզկենտրոն Գյումրուց 27կմ հարավ-արևելք, մայրաքաղաք Երևանից՝ 106կմ հեռավորության վրա: Արթիկի վարչական տարածքը կազմում է 3278հա, քաղաքի կառուցապատված մակերեսը՝ 700հա: Արթիկի բնակչությունը կազմում է 20202 բնակիչ:

### **Արթիկի պատմությունը**

Արթիկը և նրա շրջակայքը հարուստ են հինավուրց մշակույթի հուշարձաններով: Պեղումների արդյունքները հավաստում են, որ Արթիկի տարածքը բնակեցված է եղել մ.թ.ա. 14-րդ դարից: Այն տարածաշրջանային քաղաքակրթական օջախներից է եղել: Այստեղ՝ տուֆի շերտերում, հայտնաբերվել են գետնադամբան գերեզմանոցներ:

Ուշագրավ է, որ դեռևս հնում Արթիկում գործել են հողմադացներ և հսկայական ջրատար խողովակներ, որոնք կառուցված են եղել տուֆից:

Արթիկը (Արդիկ, Արդիք) եղել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից: Կամսարականների օրոք մշակույթն Արթիկում, ինչպես և ողջ տարածաշրջանում նշանակալի զարգացում է ապրել, ինչի վառ վկայությունն են հանդիսանում Արթիկում պահպանված Ս.Աստվածածին (5-րդ դար), Լմբատավանք (7-րդ դար) և Ս.Գևորգ (7-րդ դար) եկեղեցիները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 4-5-րդ դարերում կառուցված Սուրբ Աստվածածին (սուրբ Մարինե) եկեղեցին: Եկեղեցու արևելյան հատվածում տեղադրված է 3 զոհասեղան: Սուրբ Աստվածածին եկեղեցին միանավակ դահլիճից գմբեթավոր դահլիճի անցման եզակի ճարտարապետական նմուշ է:

Սուրբ Ստեփանոս (կամ Սուրբ Լմբատավանկ) եկեղեցին կառուցվել է դեռևս 7-րդ դարում: Լմբատավանկը զուսպ և խոնարհ տեսք ունի: Այն Հայաստանի վաղ քրիստոնեության ճարտարապետական շրջանի խաչագմբեթ լավագույն եկեղեցին է: Աղոթքներով ներծծված պատերը պահպանել են վաղ միջնադարյան որմնանկարների հատվածներ: Որմնանկարի բովանդակությունը նվիրված է Քրիստոնի համբարձման բիրլիական պուժեին:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի էրզրում և Կարս գավառներից գաղթած հայերը վերաբնակվում են նաև Արթիկում, և բնակավայրի համար սկսվում է վերելքի նոր ջրջան: 19-րդ դարի երկրորդ կեսին Արթիկն իր բնակչության թվով Արևելյան Հայաստանի մարդաշատ բնակավայրերից էր: Տեսնելով, որ քաղաքաքում կա 7-րդ դարում կառուցված Սուրբ Գևորգ հսկա եկեղեցի, որի կտուրը քանդված է, նորեկները որոշում են վերականգնել այն: Արթիկից ավելի քան 150 կմ հեռավորության վրա գտնվող Սարիղամիշ բնակավայրից նրանք սելերով, իսկ ճանապարհի դժվարանցանելի հատվածներում նաև սեփական ուսերին դրած՝ բերում են 20 մետրանոց գերաններեն: Սա

քրիստոնեական հավատքին նվիրումի, ազգասիրության և համերաշխության վառ դրսևորում էր:

1928թ-ից սկսվեց տուֆի արդյունահանումը, ինչը պայմանավորեց Արթիկի հետագա զարգացումը: Կառուցվեց երկաթուղին, հիմնվեցին արդյունաբերական ձեռնարկություններ, լայնամասշտաբ աշխատանքներ ծավալվեցին Արթիկի բարեկարգման, բնակարանաշինության և մշակութային կյանքի կազմակերպման ուղղությամբ:

Քաղաքի անվան հետ կապված հետաքրքիր մանրամասնություն. 'Արթիկը' Շիրակի մարզի և ընդհանրապես Հայաստանի այն բացառիկ տեղանուններից է, որ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին չի ենթարկվել համատարած բնույթ կրած թյուրքական տոպոցիդին (բնիկ հայկական տեղանունների փոխարինումը թյուրքական տարբերակներով):

Արթիկը քաղաքի կարգավիճակ է ստացել 1945թ.:

Խորհրդային ժամանակներում Արթիկը եղել է զարգացած արդյունաբերական քաղաք: 25 հազար բնակչությամբ քաղաքում գործել են 20-ից ավել մեծ ու միջին գործարաններ, ֆաբրիկաներ, արտադրական և արդյունահանող այլ կազմակերպություններ, որոնք ապահովել են ինչպես քաղաքի, այնպես էլ հարակից բնակավայրերի բնակչության զբաղվածությունը:

### **Արթիկն այսօր**

2012թ. Հայրապետական սրբատառ կոնդակով Արթիկի տարածաշրջանի եկեղեցական համայնքներն առանձնացվեցին Շիրակի թեմից և հռչակվեցին իբրև նոր՝ Արթիկի թեմ:

Համայնքում գործում է 4 նախակրթարան, 6 հիմնական, 2 ավագ և 1 հատուկ դպրոց, 1 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 գեղարվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 2 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոց և 1 մարզահամալիր:

Արթիկում ավանդաբար զարգացած է հանքարդյունաբերությունը և քարի վերամշակման արտադրությունը: Համայնքում գործում են միջին և մանր ձեռնարկություններ, որոնք արտադրում են վակուումային էլեկտրավառարաններ, մետաղական կառուցվածքներ, ապակե տարրաներ, տրիկոտաժ արտադրանք, կահույք, հացամթերք և հրուշակեղեն, կաթնամթերք և արդյունաբերական այլ արտադրանք:

2015թ. ստեղծվել է Արոսոգտագործողների կոոպերատիվ:

### **Նշանավոր արթիկցիներ**

Արթիկում են անցկացրել իրենց մանկությունն ու պատանեկությունը աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Մանսուրյանը և կինոյի ու թատրոնի հայ դերասան, ՀՀ ժողովրդական արտիստ Ազատ Գասպարյանը:

## 2. ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Արթիկ համայնքը հրապուրիչ բնակավայր է և հոգևոր-մշակութային կենտրոն: Այստեղ մատուցվում են անհրաժեշտ հանրային ծառայությունները և զարգացած է փոքր ու միջին ձեռնարկատիրությունը:

## 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ (ԾՐԱԳՐԱՅԻՆ) ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ	Ոլորտի/Ծրագրի նպատակ	Վերջնական արդյունք
<b>Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնության հանրային ծառայություններ</b>		
01	Բնակչության համար որակյալ համայնքային ծառայություններ ապահովող, հանրության համար թափանցիկ և արդյունավետ կառավարման համակարգի գործառում	ՏԻՄ-երի արդյունավետ, մասնակցային, հաշվետվողական գործունեություն
02	ՏԻՄ-երի և «ՀՀ ՇՄ Արթիկի քաղաքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի գործունեության պայմանների բարելավում	ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացում և ՀԿՀ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավում
<b>Բաժին (Ոլորտ) 2. Պաշտպանություն</b>		
<b>Բաժին (Ոլորտ) 3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն</b>		
<b>Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ</b>		
01	Համայնքի ճանապարհային տրանսպորտային համակարգերի շահագործում, կառուցում, վերանորոգում և պահպանում	Ասֆալտապատ և սալապատ՝ բարեկարգ փողոցներ
02	Բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ապահովում	Համայնքի բյուջեի եկամուտների ավելացում
<b>Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն</b>		
01	Համայնքում հրապուրիչ շրջակա միջավայրի ապահովում, աղբահանության, սան.մաքրման, ձնահեռացման իրականացում	Մաքուր համայնքային տարածքներ, հրապուրիչ շրջակա միջավայր
02	Համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման, կանաչապատման, բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտների և փողոցային լուսավորության ցանցի սպասարկման և վերանորոգման իրականացում	Բարեկարգ և կանաչապատ համայնք, պատշաճ սպասարկվող բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտներ և անխափան գործող փողոցային լուսավորության համակարգ
<b>Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն</b>		
01	Համայնքի փոցողային լուսավորության ապահովում և լուսավորության ցանցի արդիականացում	Համայնքում լուսավորված փողոցներ և արդիականացված էներգախնայողական լուսավորության ցանց
02	Համայնքում փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում	Համայնքում լուսավորված փողոցների ավելացում
<b>Բաժին (Ոլորտ) 7. Առողջապահություն</b>		
<b>Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն</b>		

01	Սպորտային հաջողությունների խրախուսում, աջակցություն սպորտային միջոցառումների մասնակցությանը	Համայնքում առողջ ապրելակերպի տարածում և սպորտի զարգացում
02	Համայնքային ենթակառուցվածքի մշակութային հիմնարկների բնականոն գործունեության ապահովում և պայմանների բարելավում, համայնքի մշակութային կյանքի ակտիվացում	Համայնքի բնակիչների համար մշակութային ոլորտի և գրադարանային ծառայությունների հասանելիություն ամբողջ տարվա ընթացքում
03	Աջակցություն ՋԼՄ-ների գործունեությանը	Տեղեկացված ու իրազեկված համայնքի բնակչություն
<b>Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն</b>		
01	Համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության հիմնարկների բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	Համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցում
02	Համայնքի արտադպրոցական կրթության և դաստիարակության հիմնարկների բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	Համայնքի բնակչությանը արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայություններ մատուցում
<b>Բաժին (Ոլորտ) 10. Սոցիալական պաշտպանություն</b>		
01	Սոցիալական հատուկ արտոնություններ ունեցող համայնքի բնակիչներին դրամական աջակցության տրամադրում	Սոցիալական հատուկ արտոնություններ ունեցող համայնքի բնակիչների սոցիալական վիճակի բարելավում՝ հասցեական նպաստի տրամադրման միջոցով

#### 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս՝ հաշվի են առնվել համայնքի բնակչության կենսական շահերը, համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը, ինչպես նաև առկա ռեսուրսները:

Համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի քառամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը: Սա փաստաթուղթ է, որն նշանակալիորեն ազդելու է մեր համայնքի կյանքի հերթական փուլի բովանդակության և որակի վրա:

Համայնքի 2016թ. բյուջեն արդյունքահեն է. այն առաջին անգամ կազմված է՝ պլանավորման նոր մեթոդոլոգիայի կիրառմամբ:

2016թ. բյուջեն ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի քննարկմանը և վերջնական տարբերակի մշակմանը:

Համայնքի բյուջեի կառավարման գործընթացում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու նպատակով՝ մինչև համայնքի տարեկան բյուջեի

նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը՝ կազմակերպվել և անցկացվել է հանրային բաց քնարկում, որում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել համայնքի ավագանուն:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, եկամուտների արդյունավետ հավաքագրումից և բյուջետային միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարում համայնքի զարգացման հիմնական ծրագրային նպատարներն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ հստակեցնելով հարկային բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը.
- Բարձրացնել բյուջետային ծասերի արդյունավետությունը.
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակը.
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և այլ աշխատանքներ.
- Իրականացնել քաղաքային տնտեսության տրանսպորտային ենթակառուցվածքների պահպանման, նորոգման և հիմնա-նորոգման ծրագրեր.
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը.
- Իրականացնել սոցիալական նշանակության ծրագրեր.

Համայնքի 2016թ. զարգացման հիմնական ծրագրային նպատարներն ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինպես նաև քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2016 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

✓ 2014թ. փաստացի ցուցանիշներ՝

Համայնքի 2014թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն՝ հաստատված համայնքի ավագանու 2015թ. հունվարի 23-ի N 2-Ն որոշմամբ.

✓ 2015թ. հաստատված ցուցանիշներ՝

Համայնքի 2015թ. բյուջեն՝ հաստատված համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 3-ի N77-Ն որոշմամբ.

✓ 2016թ. կանխատեսվող ցուցանիշներ՝

Եկամուտներ՝ 441405.5 հազ. դրամ, այդ թվում դոտացիա՝ 341531.3 հազ. դրամ,

Ծախսեր՝ 481089.5 հազ. դրամ:

(2016թ. բյուջեի եկամուտները ձևավորվել են «Տեղական ինքնակառավարման մասին», «2016թ. պետական բյուջեի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքների պահանջներով:)

**6. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՒՏՔԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

(հազար դրամ)

	ՍՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2014թ. փաստ.	2015թ. հաստ.	2016թ. կանխ.	2015թ. 2014թ. նկատ. %	2016թ. 2015թ. նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
							2014թ.	2015թ.	2016թ.
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍՈՒՏՔԵՐ</b>	<b>384271.4</b>	<b>459750.1</b>	<b>441405.5</b>	<b>119.6</b>	<b>96.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
1.	Հողի հարկ	3703.6	3657.0	3746.0	98.7	102.4	1.0	0.8	0.8
2.	Գույքահարկ	44846.8	50239.2	52124.1	112.0	103.8	11.7	10.9	11.8
3.	Տուրքեր	17421.2	16253.3	17173.5	93.3	105.7	4.5	3.5	3.9
4.	Պաշտոնական դրամաշնորհներ	294272.6	363510.1	341531.3	123.5	94.0	76.6	79.1	77.4
5.	Այլ եկամուտներ	24027.2	26090.5	26830.6	108.6	102.8	6.3	5.7	6.1
6.	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
7.	Հավելուրդ/պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՒՏՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՊԱՌՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

(հազար դրամ)

ՍՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	առ 01.01.2013թ	2013թ.	2014թ.	2015թ.	ԸՆԴԱՄԵՆԸ (առ 01.01.2016թ



						դրույթամբ)
1.	Հողի հարկ	2379.4	2279.1	3314.8	2793.8	2793.8
2.	Գույքահարկ	21733.0	17355.6	30006.1	30003.1	30003.1
3.	Տուրքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.	Պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
5.	Այլ եկամուտներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
6.	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
7.	Նախորդ տարիներին տրամադրված փոխատվությունների վերադարձից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱՊԱՌՔՆԵՐ</b>	<b>24112.4</b>	<b>19634.7</b>	<b>33320.9</b>	<b>32796.9</b>	<b>32796.9</b>

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՒՏՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

(հազար դրամ)

	ՍՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	ԸՆԴԱՄԵՆԸ
1.	Հողի հարկ	840.0	840.0	556.9	556.9	2793.8
2.	Գույքահարկ	7500.0	7500.0	7500.0	7503.1	30003.1
3.	Տուրքեր	0.0	0.0	0.0	0.0	0
4.	Պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0
5.	Այլ եկամուտներ	0.0	0.0	0.0	0.0	0
6.	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0
7.	Նախորդ տարիներին տրամադրված փոխատվությունների վերադարձից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱՊԱՌՔՆԵՐ</b>	<b>8340.0</b>	<b>8340.0</b>	<b>8056.9</b>	<b>8060.0</b>	<b>32796.9</b>

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

*ա) ըստ գործառական դասակարգման*

(հազար դրամ)

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2014թ. փաստ.	2015թ. հաստ.	2016թ. կանխ.	2015թ 2014թ նկատ. %	2016թ 2015թ նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
							2014թ	2015թ	2016թ
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>355553.1</b>	<b>493686.9</b>	<b>481089.5</b>	<b>138.9</b>	<b>97.4</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	84501.4	118313.5	98762.8	140.0	83.5	23.8	24.0	20.5
2.	Պաշտպանություն		1100.0	0.0	0.0	0.0	0.0	0.2	0.0
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.	Տնտեսական հարաբերություններ	8880.7	42071.9	28784	473.7	68.4	2.5	8.5	6.0



**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ)  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

(հազար դրամ)

Անվանումը	2014թ. փաստ.	2015թ. հաստ.	2016թ. կանխ.	2015թ 2014թ նկատ.%	2016թ 2015թ նկատ.%
ԸՆԴԱՍԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)	-5218.6	-33936.8	-39684.0	650.3	116.9

**7. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (ԽՆԴԻՐՆԵՐԸ), ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի ցանկը (անվանումները)	Ծախսեր (հազ. դրամ)
<b>Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</b>				
			<b>Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր</b>	
01	0	0	Ծրագիր 1. Բնակչության համար որակյալ համայնքային ծառայություններ ապահովող, հանրության համար թափանցիկ և արդյունավետ կառավարման համակարգի գործառույթ	96262.8
			<b>Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերին առնչվող ծրագրեր</b>	
01	1	1	Ծրագիր 2. ՏԻՄ-երի և «ՀՀ ՇՄ Արթիկի քաղաքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի գործունեության պայմանների բարելավում	2500.0
			<b>Ընդամենը՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտի ծրագրեր</b>	<b>98762.8</b>
<b>Բաժին (Ոլորտ) 2. Պաշտպանություն</b>				
			<b>Ընդամենը՝ պաշտպանության ոլորտի ծրագրեր</b>	<b>0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն</b>				
			<b>Ընդամենը՝ Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտի ծրագրեր</b>	<b>0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ</b>				
			<b>Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերին առնչվող ծրագրեր</b>	
04	5	1	Ծրագիր 1. Համայնքի ճանապարհային տրանսպորտային համակարգերի շահագործում, կառուցում, վերանորոգում և պահպանում	31284.0
04	9	1	Ծրագիր 1. Բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ապահովում	-2500.0
			<b>Ընդամենը՝ տնտեսական հարաբերությունների ոլորտի ծրագրեր</b>	<b>28784.0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն</b>				
			<b>Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր</b>	
05	1	1	Ծրագիր 1. Համայնքում հրապուրիչ շրջակա միջավայրի ապահովում, աղբահանության, սան.մաքրման, ձնահեռացման ծրագրերի իրականացում	33100.0
05	6	0	Ծրագիր 2. Համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների	22623.0

			բարեկարգման, կանաչապատման, բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտների և փողոցային լուսավորության ցանցի սպասարկման և վերանորոգման ծրագրերի իրականացում	
			<b>Ընդամենը՝ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծրագրեր</b>	<b>55723.0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն</b>				
			<b>Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր</b>	
06	4	0	Ծրագիր 1. Համայնքի փոցողային լուսավորության ապահովում և լուսավորության ցանցի արդիականացում	7600.0
			<b>Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերին առնչվող ծրագրեր</b>	
06	4	1	Ծրագիր 2. Համայնքի փոցողային լուսավորության ցանցի ընդլայնում	8400.0
			<b>Ընդամենը՝ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտի ծրագրեր</b>	<b>16000.0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 7. Առողջապահություն</b>				
			<b>Ընդամենը՝ առողջապահության ոլորտի ծրագրեր</b>	<b>0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն</b>				
			<b>Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր</b>	
08	1	1	Ծրագիր 1. Սպորտային հաջողությունների խրախուսում, աջակցություն սպորտային միջոցառումների մասնակցությանը	900.0
08	2	0	Ծրագիր 2. Համայնքային ենթակայության մշակութային հիմնարկների բնականոն գործունեության ապահովում և պայմանների բարելավում, համայնքի մշակութային կյանքի ակտիվացում	52320.4
08	3	0	Ծրագիր 3. Աջակցություն ԶԼՄ-ների գործունեությանը	300.0
			<b>Ընդամենը՝ հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծրագրեր</b>	<b>53520.4</b>
<b>Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն</b>				
			<b>Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր</b>	
09	1	0	Ծրագիր 1. Համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության գործունեության ապահովում, պայմանների բարելավում	92429.0
09	5	0	Ծրագիր 2. Համայնքի արտադպրոցական կրթության և դաստիարակության գործունեության ապահովում, պայմանների բարելավում	109800.0
			<b>Ընդամենը՝ կրթության ոլորտի ծրագրեր</b>	<b>202229.0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 10. Սոցիալական պաշտպանություն</b>				
			<b>Հանրությանը տրամադրվող տրանսֆերտներին առնչվող ծրագրեր</b>	
10	7	1	Ծրագիր 1. Սոցիալական հատուկ արտոնություններ ունեցող համայնքի բնակիչներին դրամական աջակցության տրամադրում	4000.0
			<b>Ընդամենը՝ սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրեր</b>	<b>4000.0</b>
<b>Բաժին (Ոլորտ) 11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր</b>				
			<b>Ընդամենը պահուստային ֆոնդեր</b>	<b>22070.3</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>481089.5</b>

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (ԽՆԴԻՐՆԵՐԸ)**

Ծրագրային դասիչ		Գործառնական դասիչ (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/Միջոցառում	Օախսեր (հազ. դրամ)
Ծրագիր	Միջոցառում			
<b>Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</b>				
<b>01</b>	<b>Ծրագիր</b>			
			<u><b>Ծրագրի անվանումը</b></u>	
		<b>01-0-0</b>	Բնակչության համար որակյալ համայնքային ծառայություններ ապահովող, հանրության համար թափանցիկ և արդյունավետ կառավարման համակարգի գործառում	96262.8
			<u><b>Ծրագրի նկարագրությունը</b></u>	
			«ՀՀ ՇՄ Արթիկի քաղաքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կողմից համայնքի բնակչության համար կազմակերպվում և տրամադրվում են համայնքային ծառայություններ, իրականացվում են ՀԿՀ-ի գործունեության բարելավման միջոցառումներ:	
			<u><b>Վերջնական արդյունքը</b></u>	
			ՏԻՄ-երի արդյունավետ, մասնակցային, հաշվետվողական գործունեություն	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u><b>Ծառայության անվանումը</b></u>	
<b>01</b>	<b>01</b>	<b>01-1-1</b>	ՀԿՀ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	83106.8
			<u><b>Մատուցվող ծառայության նկարագրությունը</b></u>	
		<b>01-1-1</b>	Վճարվում են ՀԿՀ-ի աշխատակիցների աշխատավարձերը և դրան հավասարեցված այլ հավելավճարներ:	71000
		<b>01-1-1</b>	Ապահովվում են ՀԿՀ-ի բնականոն գործունեության և դրա բարելավման պայմանները (էներգետիկ, կոմունալ, կապի, ապահովագրության ծառայություններ և այլն, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ):	12106.8
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u><b>Ծառայության անվանումը</b></u>	
<b>01</b>	<b>02</b>	<b>01-3-2</b>	ՀԿՀ-ի առանձին աշխատանքների կազմակերպում մասնագիտացված կազմակերպությունների տեղեկատվական ծառայությունների միջոցով	412.8
			<u><b>Մատուցվող ծառայության նկարագրությունը</b></u>	
			ՏՀԶՎԿ ՀԿ-ի Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ապահովվում է համայնքի պաշտոնական կայքի գործարկումը և իրականացվում է ՀԿՀ-ի էլեկտրոնային ներքին գործավարությունը: «Վեկտոր Պլուս» ՍՊԸ-ի Հողի հարկի, գույքահարկի, աղբահանության վճարի տեղեկատվական ավտոմատացված համակարգի միջոցով իրականացվում է համայնքային հարկային տվյալների մշակում և պահպանում: Իրականացվում է ՀԿՀ-ի համակարգչային ցանցի սպասարկում:	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		

			<u><b>Ծառայության անվանումը</b></u>	
01	03	1-3-2	Քաղաքային տրանսպորտի ծառայություններ	1200.0
			<u><b>Մատուցվող ծառայության նկարագրությունը</b></u>	
			Բնակչության առանձին խմբերի համար ապահովվում է քաղաքային տրանսպորտի անվճար ծառայություն:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<u><b>Ծառայության անվանումը</b></u>	
01	04	01-3-3	ՔԿԱԳ-ի տարածքային բաժնի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	5363.2
			<u><b>Մատուցվող ծառայության նկարագրությունը</b></u>	
			ՔԿԱԳ-ի տարածքային բաժնի կողմից համայնքի բնակիչներին մատուցվում են մասնագիտական ծառայություններ:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<u><b>Ծառայության անվանումը</b></u>	
01	05	01-6-1	ՏԻՄ-երի հրապարակային գործունեության համար տեղեկատվական ծառայությունների ձեռքբերում	1500.0
			<u><b>Մատուցվող ծառայության նկարագրությունը</b></u>	
			Հեռուստատեսությամբ և մամուլում լուրբանվում է ՏԻՄ-երի գործունեությունը, հրապարակվում են հայտարարություններ, ուղերձներ և այլն:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<u><b>Ծառայության անվանումը</b></u>	
01	06	01-6-1	Համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի գրանցում, չափագրական, կադաստրային և մասնագիտական այլ ծառայությունների ձեռքբերում, պետական տուրքի վճարում	1180.0
			<u><b>Մատուցվող ծառայության նկարագրությունը</b></u>	
			Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի գրանցման նպատակով՝ ձեռք են բերվում անհրաժեշտ չափագրական, կադաստրային և մասնագիտական այլ ծառայություններ, ինչպես նաև իրականացվում է պետական տուրքի վճարում:	
<b>Միջոցառումներ: Տրասֆերտ</b>				
			<u><b>Տրանսֆերտի անվանումը</b></u>	
01	07	01-6-1	Շահույթ չհետապնդող կազմակերպությունների գործունեության բարելավում	3500.0
			<u><b>Տրանսֆերտի նկարագրությունը</b></u>	
			Ֆինանսական նվիրատվություններ և դրամաշնորհներ են տրամադրվում համայնքի տարածքում գործող շահույթ չհետապնդող կազմակերպություններին՝ գործունեության բարելավման նպատակով, ինչպես նաև անդամավճարներ են կատարվում ՏԻՄ-երի գործունեությանը նպաստող կազմակերպություններին:	
02	<b>Օրագիր</b>			
			<u><b>Օրագրի անվանումը</b></u>	
		01-1-1	ՏԻՄ-երի և ՀԿՀ-ի գործունեության պայմանների բարելավում	2500.0
			<u><b>Օրագրի նկարագրությունը</b></u> Համայնքապետարանի	
			ՏԻՄ-երի և ՀԿՀ-ի գործունեության պայմանները բարելավվում են՝ անհրաժեշտ տեխ. սարքավորումների ձեռքբերմամբ:	

			<u>Վերջնական արդյունքը</u>	
			ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացում և ՀԿՀ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավում	
<b>Միջոցառումներ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ</b>				
			<u>Ծառայության անվանումը</u>	
02	01	01-1-1	ՏԻՄ-երի և ՀԿՀ-ի գործունեության համար անհրաժեշտ տեխ. սարքավորումների ձեռքբերում	2500.0
			<u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u>	
			Ձեռք են բերվում համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակման սարքավորումներ, փողոցային բարձրախոս համակարգ, ՀԿՀ-ի աշխատակիցների գործունեության համար վարչական տեխ. սարքավորում և կահույք:	
<b>Բաժին (Ոլորտ) 2. Պաշտպանություն</b>				
<b>Բաժին (Ոլորտ) 3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն</b>				
<b>Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ</b>				
01	<b>Ծրագիր</b>			
			<u>Ծրագրի անվանումը</u>	
		04-5-1	Համայնքի ճանապարհային տրանսպորտային համակարգերի շահագործում, կառուցում, վերանորոգում և պահպանում	31284.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Համայնքում իրականացվում են կենտրոնական փողոցների փոսային նորոգման և երկրորդային փողոցների սալապատման աշխատանքներ:	
			<u>Վերջնական արդյունքը</u>	
			Ասֆալտապատ և սալապատ՝ բարեկարգ փողոցներ	
<b>Միջոցառումներ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ</b>				
			<u>Միջոցառման անվանումը</u>	
01	01	04-5-1	Համայնքի կենտրոնական փողոցների փոսային նորոգման և երկրորդային փողոցների սալապատման աշխատանքների իրականացում	31284.0
			<u>Միջոցառման նկարագրությունը</u>	
			Օրենքով սահմանված կարգով՝ մրցույթում հաղթած մասնագիտական կազմակերպությունների կողմից իրականացվում են համայնքի կենտրոնական փողոցների փոսային նորոգման և երկրորդային փողոցների տուֆ քարով սալապատման աշխատանքներ: Ապահովվում են նախագծանախահաշվային փաստաթղթերը:	
02	<b>Ծրագիր</b>			
			<u>Ծրագրի անվանումը</u>	
		04-9-1	Բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ապահովում	-2500.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառքների միջոցով ապահովվում են համայնքային եկամուտներ:	
			<u>Վերջնական արդյունքը</u>	
			Համայնքի բյուջեի եկամուտների ավելացում	
<b>Միջոցառումներ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ</b>				
			<u>Միջոցառման անվանումը</u>	-2500.0
02	01	04-9-1	Եկամուտների ապահովում համայնքային հողերի օտարումից	

			<u>Միջոցառման նկարագրությունը</u>	
			Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառքների միջոցով ապահովվում են համայնքային եկամուտներ:	
<b>Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն</b>				
<b>01</b>	<b>Ծրագիր</b>			
			<u>Ծրագրի անվանումը</u>	
		<b>05-1-1</b>	Համայնքում հրապուրիչ շրջակա միջավայրի ապահովում, աղբահանության, սան. մաքրման, ձնահեռացման իրականացում	33100.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Համայնքում իրականացվում են աղբահանության, սան. մաքրման, ձնահեռացման ծառայությունները՝ համաձայն համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման և իրականացման կարգի և ժամանակացույցի, ինչպես նաև կազմակերպվում են համայնքային տարածքների մաքրման շաբաթօրյակներ:	
			<u>Վերջնական արդյունքը</u>	
			Մաքուր համայնքային տարածքներ, հրապուրիչ շրջակա միջավայր	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u>Ծառայության անվանումը</u>	
<b>01</b>	<b>01</b>	<b>05-1-1</b>	Համայնքում աղբահանության, սան. մաքրման, ձնահեռացման ծառայություններն իրականացնող կազմակերպության գործունեության ապահովում:	33100.0
			<u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u>	
			Օրենքով սահմանված կարգով՝ մրցույթում հաղթած մասնագիտական կազմակերպության կողմից համայնքում իրականացվում են աղբահանության, սան. մաքրման, ձնահեռացման ծառայությունները՝ համաձայն համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման և իրականացման կարգի և ժամանակացույցի:	
<b>02</b>	<b>Ծրագիր</b>			
			<u>Ծրագրի անվանումը</u>	
		<b>05-6-0</b>	Համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման, կանաչապատման, բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտների և փողոցային լուսավորության ցանցի սպասարկման և վերանորոգման իրականացում	22623.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Համայնքում իրականացվում են համայնքային տարածքների բարեկարգման, կանաչապատման, բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտների և փողոցային լուսավորության ցանցի սպասարկման ծառայությունները:	
			<u>Վերջնական արդյունքը</u>	
			Բարեկարգ և կանաչապատ համայնք, պատշաճ սպասարկվող բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտներ և անխափան գործող փողոցային լուսավորության համակարգ	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u>Ծառայության անվանումը</u>	
<b>02</b>	<b>01</b>	<b>05-6-1</b>	«Քաղաքային տնտեսության սպասարկում» ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում	22623
			<u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u>	



			«Քաղաքային տնտեսության սպասարկում» ՀՈԱԿ-ի կողմից համայնքում իրականացվում են համայնքային տարածքների բարեկարգման, կանաչապատման, բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտների և փողոցային լուսավորության ցանցի սպասարկման ծառայությունները:	
<b>Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն</b>				
<b>01</b>	<b>Ծրագիր</b>			
			<u><i>Ծրագրի անվանումը</i></u>	
		<b>06-4-0</b>	Համայնքի փոցողային լուսավորության ապահովում և լուսավորության ցանցի արդիականացում	7600.0
			<u><i>Ծրագրի նկարագրությունը</i></u>	
			Համայնքում ապահովվում է փողոցների լուսավորվածություն՝ էներգախնայողական լուսատուների միջոցով:	
			<u><i>Վերջնական արդյունքը</i></u>	
			Համայնքում լուսավորված փողոցներ և արդիականացված էներգախնայողական լուսավորության ցանց	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u><i>Միջոցառման անվանումը</i></u>	
<b>01</b>	<b>01</b>	<b>06-4-1</b>	Համայնքում փողոցների լուսավորման համար էներգետիկ ծառայությունների ձեռքբերում	5000.0
			<u><i>Միջոցառման նկարագրությունը</i></u>	
			Համայնքում ապահովվում է փողոցների լուսավորվածություն՝ փողոցային լուսավորման սխեմային համապատասխան:	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u><i>Միջոցառման անվանումը</i></u>	
<b>01</b>	<b>02</b>	<b>06-4-1</b>	Հետաձգված վճարում՝ էներգախնայողական լամպերով համայնքի փողոցային լուսավորության ցանցի արդիականացման համար	2600.0
			<u><i>Միջոցառման նկարագրությունը</i></u>	
			Կատարվում է հետաձգված վճարում՝ համայնքի փողոցներում տեղադրված էներգախնայողական լուսավորության կահավորանքի և դրա սպասարկման ծառայության համար:	
<b>02</b>	<b>Ծրագիր</b>			
			<u><i>Ծրագրի անվանումը</i></u>	
		<b>06-4-1</b>	Համայնքում փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում	8400.0
			<u><i>Ծրագրի նկարագրությունը</i></u>	
			Ընդլայնվում է համայնքի լուսավորության ցանցը՝ փողոցային լուսավորման սխեմային համապատասխան:	
			<u><i>Վերջնական արդյունքը</i></u>	
			Համայնքում լուսավորված փողոցների ավելացում	
		<b>Միջոցառումներ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ</b>		
			<u><i>Միջոցառման անվանումը</i></u>	
<b>02</b>	<b>01</b>	<b>06-4-1</b>	Համայնքի լուսավորության համակարգի ընդլայնում	8400.0
			<u><i>Միջոցառման նկարագրությունը</i></u>	
			Համայնքի փողոցներում մոնտաժվում են նոր հենասյուներ և փողոցային լուսավորության արդիական կահավորանք:	
<b>Բաժին (Ոլորտ) 7. Առողջապահություն փողոցներում է նոր</b>				

Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն				
01	<b>Ծրագիր</b>			
			<u>Ծրագրի անվանումը</u>	
		08-1-1	Սպորտային հաջողությունների խրախուսում, աջակցություն սպորտային միջոցառումների մասնակցությանը	900.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Համայնքի շնորհալի մարզիկների սպորտային հաջողությունները խրախուսելու համար տրամադրվում են սպորտային նպաստներ: Համայնքում առողջ ապրելակերպի տարածման և մեծահասակների ֆուտբոլի զարգացմանն աջակցելու նպատակով՝ տրամադրվում են փոխհատուցումներ՝ սպորտային միջոցառումներին մասնակցության համար:	
			<u>Վերջնական արդյունքը</u>	
			Համայնքում առողջ ապրելակերպի տարածում և սպորտի զարգացում	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u>Միջոցառման անվանումը</u>	
01	01	08-1-1	Աջակցություն սպորտային միջոցառումների մասնակցությանը	700.0
			<u>Միջոցառման նկարագրությունը</u>	
			Համայնքի մեծահասակների ֆուտբոլի թիմին տրամադրվում են փոխհատուցումներ՝ սպորտային միջոցառումներին մասնակցության համար:	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u>Միջոցառման անվանումը</u>	
01	02	08-1-1	Սպորտային հաջողությունների խրախուսում	200.0
			<u>Միջոցառման նկարագրությունը</u>	
			Տրամադրվում են սպորտային նպաստներ՝ պաշտոնական առաջնություններում համայնքի կրտսեր և ավագ տարիքի պատանի և երիտասարդ մարզիկների և թիմերի մարզական հաջողությունները խրախուսելու համար:	
02	<b>Ծրագիր</b>			
			<u>Ծրագրի անվանումը</u>	
		08-2-0	Համայնքային ենթակայության մշակութային հիմնարկների բնականոն գործունեության ապահովում և պայմանների բարելավում, համայնքի մշակութային կյանքի ակտիվացում	52320.4
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Գրադարանի և մշակույթի տների կողքից համայնքի բնակչությանը տրամադրվում են կրթամշակութային, սոցիալ-մշակութային, ժամանցային ծառայություններ, իրականացվում է աջակցություն մշակութային ինքնագործունեության զարգացմանը:	
			<u>Վերջնական արդյունքը</u>	
			Համայնքի բնակիչների համար մշակութային ոլորտի և գրադարանային ծառայությունների հասանելիություն ամբողջ տարվա ընթացքում	
		<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>		
			<u>Ծառայության անվանումը</u>	
02	01	08-2-1	«Արթիկի գրադարան» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության	17134.0

			ապահովում	
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ի կողմից մատուցվում են գրադարանային ծառայություններ համայնքի ավելի, քան երեք հազար բնակչի՝ ողջ տարվա ընթացքում:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	02	08-2-3	«Տ.Մանսուրյանի անվան մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում	17801.5
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ի կողմից համայնքի բնակչությանը տրամադրվում են կրթամշակութային, սոցիալ-մշակութային, ժամանցային ծառայություններ, իրականացվում է աջակցություն մշակութային ինքնագործունեության զարգացմանը:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	03	08-2-3	«Վ.Սամուելյանի անվան մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում	14034.9
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ի կողմից համայնքի բնակչությանը տրամադրվում են կրթամշակութային, սոցիալ-մշակութային, ժամանցային ծառայություններ, իրականացվում է աջակցություն մշակութային ինքնագործունեության զարգացմանը:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Միջոցառման անվանումը</u></b>	
02	04	08-2-4	ՀՀ պետական տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում	3350.0
			<b><u>Միջոցառման նկարագրությունը</u></b>	
			Ամանորի, Բանակի օրվա, Կանանց տոնի, Մայրության, և գեղեցկության տոնի, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա, Հաղթանակի և խաղաղության տոնի, Հանրապետության տոնի, Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա, Անկախության տոնի, Ուսուցչի օրվա առթիվ միջոցառումների կազմակերպում: Համայնքի բնակիչների կարող են օգտվել հանգստի և ժամանցի ծառայություններից ամբողջ տարվա ընթացքում, մասնակցել պետական և քաղաքային տոների և հիշատակի օրերի կապակցությամբ կազմակերպված միջոցառումներին:	
03	<b>Ծրագիր</b>			
			<b><u>Ծրագրի անվանումը</u></b>	
		08-3-0	Աջակցություն ԶԼՄ-ների գործունեությանը	300.0
			<b><u>Ծրագրի նկարագրությունը</u></b>	
			Աջակցություն է տրամադրվում «Տուֆաշխարհի առօրյա» շաբաթաթերթի գործունեությանը, որը համայնքի բնակչությանն այլոց թվում իրազեկում և տեղեկացնում է ՏԻՄ-ների գործունեության և համայնքային նշանակության իրադարձությունների և միջոցառումների վերաբերյալ:	
			<b><u>Վերջնական արդյունքը</u></b>	
			Տեղեկացված և իրազեկված համայնքի բնակչություն	

Միջոցառումներ: Տրասֆերտ				
			<u>Տրանսերտի անվանումը</u>	
03	01	08-3-2	Աջակցություն ՁԼՄ-ների գործունեությանը	300.0
			<u>Տրանսֆերտի նկարագրությունը</u>	
			Աջակցություն է տրամադրվում «Տուֆաշխարհի առօրյա» շաբաթաթերթի գործունեությանը, որը համայնքի բնակչությանն այլոց թվում իրազեկում և տեղեկացնում է ՏԻՄ-ների գործունեության և համայնքային նշանակության իրադարձությունների և միջոցառումների վերաբերյալ:	
Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն				
01	Ծրագիր			
			<u>Ծրագրի անվանումը</u>	
		09-1-0	Համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության հիմնարկների բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	92429.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Համայնքի 4 նախակրթարանների կողմից մատուցվում են որակյալ կրթադաստիարակչական ծառայություններ համայնքի՝ նախադպրոցական տարիքի երեխաներին:	
			<u>Վերջնական արդյունքը</u>	
			Համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցում	
Միջոցառումներ: Ծառայություններ				
			<u>Ծառայության անվանումը</u>	
01	01	09-1-1	«Արթիկի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	18582.0
			<u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u>	
			ՀՈԱԿ-ի 3 խմբում 8-ժամյա ռեժիմով 3-6 տարեկան 95 սանի մատուցվում են երեխաների խնամքին, ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ծառայություններ, ինչպես նաև երեխաները նախապատրաստվում են դպրոց գնալուն՝ նախնական հմտությունների մակարդակով:	
Միջոցառումներ: Ծառայություններ				
			<u>Ծառայության անվանումը</u>	
01	02	09-1-1	«Արթիկի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	25837.0
			<u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u>	
			ՀՈԱԿ-ի 4 խմբում 8-ժամյա ռեժիմով 3-6 տարեկան 128 սանի մատուցվում են երեխաների խնամքին, ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ծառայություններ, ինչպես նաև երեխաները նախապատրաստվում են դպրոց գնալուն՝ նախնական հմտությունների մակարդակով:	
Միջոցառումներ: Ծառայություններ				
			<u>Ծառայության անվանումը</u>	
01	03	09-1-1	«Արթիկի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն»	26802.0

			ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ի 4 խմբում 8-ժամյա ռեժիմով 3-6 տարեկան 130 սանի մատուցվում են երեխաների խնամքին, ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ծառայություններ, ինչպես նաև երեխաները նախապատրաստվում են դպրոց գնալուն՝ նախնական հմտությունների մակարդակով:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
01	04	09-1-1	«Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	21208.0
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ի 3 խմբում 8-ժամյա ռեժիմով 3-6 տարեկան 96 սանի մատուցվում են երեխաների խնամքին, ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ծառայություններ, ինչպես նաև երեխաները նախապատրաստվում են դպրոց գնալուն՝ նախնական հմտությունների մակարդակով:	
02	<b>Ծրագիր</b>			
			<b><u>Ծրագրի անվանումը</u></b>	
		09-5-0	Համայնքի արտադպրոցական կրթության և դաստիարակության հիմնարկների բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	109800.0
			<b><u>Ծրագրի նկարագրությունը</u></b>	
			Համայնքի գեղագիտական դաստիարակության կենտրոնի, երաժշտական և գեղարվեստի դպրոցների, մարզադպրոցի, մարզահամալիրի, ֆուտբոլի դպրոցի բնականոն գործունեության ապահովում, նյութատեխնիկական պայմանների բարելավում	
			<b><u>Վերջնական արդյունքը</u></b>	
			Համայնքի բնակչությանը արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայություններ մատուցում	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	01	09-5-1	«Արթիկի Դ.Ղազարյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	34644.0
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ի դաշնամուրային, լարային, ազգային նվագարանների, վոկալի բաժիններում 227 սանի մատուցվում են երաժշտական կրթության որակյալ ծառայություններ՝ ուսումնառության 5-ամյա և 7-ամյա տևողությամբ: Ըստ նախասիրությունների և երգեցողական ունակությունների՝ սաները հաճախում են նաև ՀՈԱԿ-ում գործող մանկական երգչախումբ:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	02	09-5-1	«Արթիկի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	9078.0

			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ում 104 սանի մատուցվում են գեղարվեստական կրթության որակյալ ծառայություններ՝ ուսումնառության 4-ամյա և 7-ամյա տևողությամբ:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	03	09-5-1	«Արթիկի գեղագիտական դաստիարակության կենտրոն» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	18028.0
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ի գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, ասմունք, երգ-երաժշտություն, հելլոնագործություն, «հմուտ ձեռքեր», գեղանկարչություն, արտ-դիզայն, «հետաքրքրաշարժ մաթեմատիկա», տարրական դասարանների ուսուցում, կենսաբանություն, համակարգչային ծրագրերի ուսուցում խմբակներում 150 սանի մատուցվում է գեղագիտական դաստիարակության որակյալ ծառայություններ:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	04	09-5-1	«Արթիկի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	18584.0
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ում 146 սանի մատուցվում է ֆիզիկական և մարզական դաստիարակության որակյալ ծառայություններ բասկետբոլ և վոլեյբոլ մարզաձևերից:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	05	09-5-1	«Արթիկի մարզահամալիր» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	18145.0
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ում 108 սանի մատուցվում է ֆիզիկական և մարզական դաստիարակության որակյալ ծառայություններ ծանրամարտ, բռնցքամարտ, ըմբշամարտ մարզաձևերից:	
<b>Միջոցառումներ: Ծառայություններ</b>				
			<b><u>Ծառայության անվանումը</u></b>	
02	06	09-5-1	«Արթիկի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	11321.0
			<b><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></b>	
			ՀՈԱԿ-ում 86 սանի մատուցվում է ֆիզիկական և մարզական դաստիարակության որակյալ ծառայություններ ֆուտբոլ մարզաձևից:	
<b>Բաժին (Ոլորտ) 10. Սոցիալական պաշտպանություն</b>				
01	<b>Ծրագիր</b>			
			<b><u>Ծրագրի անվանումը</u></b>	
		10-7-1	Սոցիալական հատուկ արտոնություններ ունեցող համայնքի բնակիչներին դրամական աջակցության տրամադրում	4000.0
			<b><u>Ծրագրի նկարագրությունը</u></b>	
			Սոցիալական հատուկ արտոնություններ ունեցող համայնքի	

			բնակիչներին տրամադրվում է դրամական աջակցություն՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ և ավագանու որոշմամբ:	
			<b><u>Վերջնական արդյունքը</u></b>	
			Սոցիալական հատուկ արտոնություններ ունեցող համայնքի բնակիչների սոցիալական վիճակի բարելավում՝ հասցեական նպաստի տրամադրման միջոցով	
<b>Միջոցառումներ: Տրասֆերտ</b>				
			<b><u>Տրանսֆերտի անվանումը</u></b>	
01	01	10-7-1	Սոցիալական հատուկ արտոնություններ ունեցող համայնքի բնակիչներին դրամական աջակցության տրամադրում	4000.0
			<b><u>Տրանսֆերտի նկարագրությունը</u></b>	
			Դրամական աջակցություն է տրամադրվում Արցախյան ազատամարտում մարտական գործողությունների ժամանակ զոհվածների ընտանիքներին, Արցախյան ազատամարտում մարտական գործողություններին մասնակից հաշմանդամ ազատամարտիկներին, հրադադարից հետո զոհվածների ընտանիքներին, 2-րդ Համաշխարհային պատերազմի մասնակից-վետերաններին: Համայնքի բնակիչների դիմումների հիման վրա իրականացվում է սոցիալապես անապահով ընտանիքների անդամների հուղարկավորության ծախսերի մասնակի փոխհատուցում: Համայնքի բնակիչների դիմումների հիման վրա իրականացվում է արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ծախսերի մասնակի փոխհատուցում, նաև դրամական աջակցություն է տրամադրվում կյանքի դժվարին իրավիճակում հայտված, բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքներին:	

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ  
(ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ)**

**01.01-01-1-1 Ծառայություններ**

<b>Ծրագրային դասիչը (01-1-1)</b>		<b>Ծառայության անվանումը</b> ՀԿՀ-ի բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	<b>Ոչ ֆինանսական ցուցանիշներ</b>	<b>Ֆինանսական ցուցանիշներ</b>
<b>01</b>	<b>01</b>	<b>Նկարագրություն</b> Վճարվում են ՀԿՀ-ի աշխատակիցների աշխատավարձերը և դրան հավասարեցված այլ հավելավճարներ: Ապահովվում են ՀԿՀ-ի բնականոն գործունեության և դրա բարելավման պայմանները (էներգետիկ, կոմունալ, կապի, ապահովագրության ծառայություններ և այլն, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ):		
<b>Չափորոշիչներ (Ցուցանիշներ)</b>			<b>2016թվական</b>	
<b>Քանակական</b>	Քաղաքապետ		1	X
	Հայեցողական պաշտոն զբաղեցնողների թիվը		4	X
	Աշխատակազմի աշխատողների թիվը		38	X
	Համայնքի ավագանու անդամների թիվը		15	X
	Համատիրություններ		2	X
<b>Որակական</b>	Աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում %/		20	X
	Բնակիչների դիմում-բողոքների քանակի նվազում %/		10	X
<b>Ժամկետայնության</b>	Աշխատանքային օրերի թիվը /տարի/		1	X
